



## ԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆՇԱՆԱՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ

*Մեծ տեսչիքի մենք զայտակներ  
(Ճեմարանի օրիներգից)*

Գևորգյան Հոգևոր ճեմարանի սաները այս հասկապության հիմնադրումից ի վեր որ իրապես եղել են այս մեծ փեսիքի զավակները, մեկ անգամ ևս համոզվում ես՝ ընթերցելով «Նշանավոր ճեմարանականները» շարքի առաջին գիրքը, որը հրապարակվել է ճեմարանի հիմնադրման 130-ամյակի առիթով<sup>1</sup>:

Հայոց Եկեղեցու առջև ծառացած մարդաբանակերներին դիմագրավելու ժամանակի թելադրանքով ու Գևորգ Դ Մեծագործ Կաթողիկոսի փեսիքով և վերջինիս մարմնավորման համար գործադրված նրա անդուլ ջանքերով սփեղծվեց հոգևոր այս կյածօջախը, որի սաները սերունդ սերունդ կրողներն են նրա հիմնադրի նվիրական փեսիքի:

Գիրքը բացվում է ճեմարանի 130-ամյակի առիթով դրված Հայրապետական Սրբաւագանու և Կոնդակի, որում Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այսպես է բնորոշում այս հասկապության դերը մեր ազգային Եկեղեցական կյանքում. «Ճեմարանի հասկապումը իր ժամանակին մեծ ոգևորութիւն առաջ բերեց հայ ազգային կենաքում, և Գևորգ Դ Կաթողիկոսն ունեցաւ խանդակառ ու նուիրեալ համախոններ ու աջակիցներ և մանաւանդ՝ յեւբեորդներ, ովքեր հոգի ու ջանք ներդրեցին, որ հասակ առնի և ուսումնական եռուն կենաքուլ լցուի հոգևոր կյածօջախը: Արդարն, Հայոց Հայրապետը միայնակ չէր իր յոյսերի ու հասարի մէջ: Սուրբ Էջմիածնի ասպուածահայեաց հովանու ներքո՝ Մայր Ճեմարանը դարձաւ կոթութեան ու լուսաւորութեան կենտրոնը հայրենի հողում՝ ծանօթ ու սիրելի ժողովրդին իր հիմնադրի անունով՝ ԳԵՐՈՐԳԵԱՆ»:

<sup>1</sup> Նշանավոր ճեմարանականները, պրակ Ա. Ս. Էջմիածնին, 468 էջ:

Այս հապորք փափրկվել է մեկնասությամբ Ռուփի և Նշան Տերդերյանների (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ, Լոս Անջելես):

Գրքի «Նայ մշակույթի նշանավոր օրբան» խորագրված առաջարանում պարմարան դեմքը Հովհաննիսյանը ներկայացնում է Ճեմարանի հիմնման պարմությունը և գործունեությունը՝ մինչև մեր օրերը, թե ինչ մեծ ջանքերով այն բացվեց և գործեց և թե այսուելով վերստին ինչային մեծ ջանքեր պահանջվեցին, որպեսզի վերաբացվի Նայոց Եկեղեցու հոգևոր հաստափությունների այս մայր հաստափությունը, որը հոգևորականների պարմարության հոգևոր դարբնոց է Հայաստանյաց Առքելական Սուրբ Եկեղեցու:

Ճեմարանի դերը նախախորհրդային շրջանում Պ. Հովհաննիսյանը այսպես է բնորոշում. «40 դարուց ավելի այն կրթել ու դաստիարակել է բազմաթիվ սերունդներ: Անհնարին է պարկերացնել XIX դ. Վերօնի և XX դ. առաջին կեսի հայ մրավոր կյանքն ու Եկեղեցին առանց Գևորգյան Ճեմարանի գործունեության: Այն ըստ Եւրյան արևելահայ ամբողջ մշակույթն է, մանկավարժությունն ու դպրոցը, գիտությունն ու հասարակական-քաղաքական կյանքը, ազագագրական պայքարը, Եկեղեցին ու հոգևոր կյանքը: Դիս որևէ բնագավառ, որին Ճեմարանը թողած չինի իր գործունեության հետքերը: Գևորգյան Ճեմարանը միանգամմից բարձրացրել է հայ ժողովրդի մրավոր մակարդակը՝ հասցնելով բարձրագույն՝ նվիրապական չափանիշների: Մինչև Երևանի պետքական համալսարանի հիմնադրումը Ճեմարանը հայ իրականության միակ բարձրագույն ուսումնական հաստափությունն էր և որպես այդպիսին մի նվիրական ու պավականի երևույթ էր հայ կյանքի բոլոր հանգուցակերպություններավոր Շնորհաստանից մինչև եվրոպական ոսդանները, Ռուսաստանից մինչև սիրիական անապատները»:

Ներգործող նաև նշում է, որ խորերդային իշխանության առաջին դասանամյակներին թեև ջրույլապրվեց, որպեսզի Ճեմարանը գործի, սակայն նրա գործունեությունը շարունակվեց Հայաստանի կրթամշակութային կյանքում, քանի որ Ճեմարանի հարուստ գրադարանի հիման վրա ծևավորվեցին Հայաստանի Ազգային Գրադարանի և Մաշտոցյան Մարենադարանի գրքային ֆոնդերը, իսկ Ճեմարանի դասախոսներն ու շատ սաներ դարձան նորագեղ Երևանի պետքական համալսարանի և մյուս ուսումնական հաստափությունների դասախոսները:

Ճեմարանը իր գործունեության ընթացքում փետ է 1500 շրջանավարդ, և այսպես դասավանդել են հարյուրից ավելի դասախոսներ:

Այս շարքի ներկայացվող առաջին և լույս փեսնելիք հաջորդ գրքերի հրատարակության սկզբունքերի մասին ասվում է. «Որոշվել է առանձին ժողովածուներով դադարական ճեմարանականների (սաների և ուսուցիչների) գործունեության համառոր բնութագիրը՝ որպես համեստ փուրք նրանց անմեռ հիշարակին:

Սույն պրակի առաջին մասում ներկայացված են Ճեմարանի գոյության ընթացքում գահակալած Ամենայն Նայոց բոլոր Կաթողիկոսների կենսագրականները: Թեև նրանցից մի քանիսն են եղել Ճեմարանի սաներ, մի քանիսը՝ ուսուցիչներ, մյուսներն էլ նապարել են ուսումնական հաստափության պայծառացմանը, սակայն նրանց բոլորին միավորում է Ճեմարանի վերաբեսուց ինելու հանգամանքը:

Պրակի երկրորդ մասում դրվելու են ևս 35 նշանավոր ճեմարանականների կենսագրություններ: Դրանց ընդունությունը կապարվել է առանց որևէ նախապատվության: Բոլոր պրակինների համար էլ սկզբունքը մնում է միևնույնը՝ թե՛ սանը, թե՛ ուսուցիչը հայ մշակույթի և գիտության, Եկեղեցու և դպրոցի, հասարակական-քաղաքական կյանքի նշանավոր գործիչներ են եղել:

Առաջիկայում լույս են վրեանելու նաև այլ պրակիններ, որոնցում դրվելու են Ճեմարանի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ շրջանի երախտաշապ գործիչների կենսագրականները»:

Այսպիսով գրքի առաջին բաժնում ներկայացվում են Հայոց Հայրապետունները Ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ-ից մինչև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Շնորհիվ նման ընդգրկման, այս բաժինը ըստ Եւլոյան դառնու՞մ է նաև Մշայր Ալոյի Վերջին 130 դարինների պարմությունը՝ դիմարկված ճեմարանի փեսանկյունից և հարաբերված նրա պարմության հետ, քանի որ Հայրապետունների կենսագրություն-դիմանկարները կազմված են հետևյալ սկզբունքով. նախ ներկայացվում է կաթողիկոսներից յուրաքանչյուրի կենսագրությունը և Եկեղեցական գործունեությունը մինչև կաթողիկոս ընդունելու, ապա կաթողիկոսության շրջանը, բերած նպաստը հայ մշակույթին ու գիտությանը և թե որպես սան կամ դասախոս ինչ առնչություն է ունեցել ճեմարանի հետ և կամ վերջինիս վերաբերվող հայրապետական ինչ բնօրինություններ է կապարել:

Գրքի երկրորդ բաժնում, ինչպես ասվեց, ներկայացվում են Ճեմարանում ուսանած և կամ դասավանդած 35 սաներ և դասախոսներ: Առանձին հոդվածներ են նվիրված ճեմարանում ուսանած Կոմիտաս վարդապետին, Կարապետ Եայսկոպոս Տեր-Մկրտչյանին, Գալուստ Տեր-Մկրտչյանին, Մեսրոպ Մագհաւրոսին, Ավետիք Խաչակրանին, Ներենիկ Դեմիրճյանին, Սրբեփան Մալխասյանցին, Արտեմ Տերպերյանին, Նիկողայոս Աղոնցին, Նիկոլ Աղբայանին, Սիմոն Վրացյանին, Փարամագին, Ավել Բակունցին և էլի մի շարք մրավորականների, որոնք իրենց լուսավոր հետքը են թողել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ կյանքի երկնակամարում:

Գրքում ներկայացված դասախոսներից և ճեմարանի պարմության առաջին շրջանի փեսուններից հիշենք Գարբիել Եայսկոպոս Այվազովսկուն, Մաղաքիա Պարքիարք Օրմանյանին, Ջրիստափոր Կարա-Մուրզային, Շովիաննես Շովիաննիսյանին, Մակար Եկմալյանին, Եղիշե Թաղևոսյանին, Սրբեփան Լիսիցյանին, Գարեգին Լևոնյանին, Հակոբ Մանանյանին, Հրայր Աճառյանին և Գրիգոր Ղափանցյանին:

Անոնների այս շարքը ցույց է տվալիս, որ «Նշանավոր ճեմարանականներ» գիրքը միաժամանակ նվիրված է Հայոց Եկեղեցու, մշակույթի և հասարակական-քաղաքական կյանքի 19-րդ դարի վերջին քառորդի և 20-րդ դարի առաջին կեսի մի շարք նշանավոր գործիչների, որով հոգևոր ու գիտա-մշակութային գործեր փեսանկյուններից ամբողջանում է ժամանակաշրջանի պարկերը, ցույց է դրվում, թե այս մրավորականներից յուրաքանչյուրի կյանքում ինչ դեր է խաղացել ճեմարանը և ինչպիսին է այն մնացել նրանց մրավագրելում: Բերված են նաև ճեմարանին այնպես ուսանելուց դարիններ անց դպրեր սաների դրվագ բնորոշումները: Խոսուն են հագեցապես Ավետիք Ահարոնյանի հետևյալ պողերը. «...Ճեմարանի դրները միշտ լայնորեն բաց եղան հայ ժողովրդի ամեննեն խոնարի խավերի զավակների առջև, և հաճախ այնպիսի խորշերից, որ դպրերից ի վեր ուսման և քաղա-

քակրթության լույսը չէր թափանցել: Միակ պայմանն էր, որ ընդրված գրաները լինեին ու շիմ, ժիր, ընդունակ, ջամսատր ու ատաքինի:

... Տարիներ հետո հասունացած ու զարգացած աշակերդը խորապես զգում ու զիվակցում էր, թե ինքն այլևս այսինչ գյուղի, այսինչ գյուղացու զավակ չէ, այլ ազգի զավակը, ծանր ու գեղեցիկ պարզք ունի հանդեպ հայ հանրության:

Եվ այսպիսով համազգային ճեմարանից եկած էին համազգային ընդիր քաղաքացիներ:

... Ճեմարանը **Հայոց Աշխարհի գրնկարանն էր, Հայաստանի մի մասնակիւրը»:**

Կենսագրական այս հոդվածները նաև գալիս են վկայելու, թե ժամանակի ազգային-հասարակական կյանքում բացառիկ ինչ դեր էր Վերապահված հայ ժողովրդի հոգևոր կենդրությին, երբ մեր մրավորականության լավագույն ներկայացուցիչներից շավերը, ավարտելով Եվրոպական համալսարանները և հենարավորություն ունենալով մնալու և աշխարելու զիվա-մշակութային այդ կենդրուններում, վերադարձել են Հայրենիք և դիմել Հայոց Հայրապետներին՝ Ս. Էջմիածնում դասավանդելու համար՝ քաջ գիրակցելով, որ ճեմարանական սերնդին էր Վերապահված հայ ժողովրդի հոգևոր Վերածնության նախապատրաստման գործը, որը նրանք իրապես պարվով կատարեցին:

Այս զիրքը հրապարակության է պատրաստվել Գևորգյան Շոգևոր ճեմարանի գեսչության, դասախոսական կազմի և Մայր Աթոռի միաբանության ջանքերով: Գրքի հրապարակությանը դարձեր հոդվածներով իրենց մասնակցությունն են բերել նաև Հայաստանի զիվա-ուսումնական մի շարք հաստապությունների աշխարհակիցները:

**ՎԱՐԴԱՆ ՀԵՎՐԻԿՅԱՆ**